

ՊԱՏՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.

Վեցամսեայ . . 6 "

ՍՐՏԱՍԱՀՄԱՆ

Իրկու թիւ ձեկ ծրարով

Տարեկան . . 14 Ձր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօրար

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանշանակ տողը
20 սանդղակ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇՈՐԱԹ

Հ Ա Ս Յ Է

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրողները եւս
լին տրոշիր

ՅՐԱՆՍԱ ՈՒ ՏԱԿԱՀԱՅ
ԳԱՂԱԿԱՆՆԵՐԸ

(Ռուսիա ապաստանող Տաճկահայ
գաղթականները Ֆրանսայի արտաքին
գործերու նախարարութեան հետեւեալ
խնդրագիրը մատուցած են):

Նորին Գերազանցութիւն, Ֆրանս.
սակաւ Հանրապետութեան արտա-
քին գործերու նախարարին .

Ձեր Գերազանցութիւն,

Մենք, Օսմանեան հպատակ
Տաճկահայերս, 1894-96ի Հայկա-
կան կոտորածներու միջոցին գաղ-
թելու հարկադրուած ու թուով
40-50,000 հոգի Ռուսական հիւ-
րակալ հողին վրայ ապաստանած,
ներկայ աղերսագրով կուգանք
Ֆրանսական Ազգի կառավարու-
թեան խնդրելու, ինչպէս արդէն
խնդրեցինք համայն Ռուսիոյ Օ-
գոստափառ Կայսեր կառավարու-
թեան, որ մեր ներկայ տաժա-
ների վիճակին մէջ, մեզի օգնելու
և հովանաւորելու հաճի:

Մենք մեղապարտներ չենք. ոչ
մէկ ոճիր գործած ունինք. այլ
հարկադրուած էինք մեր ծննդա-
վայրը թողուլ, միմիայն թշուա-
ռութեան ու կոտորածի երկիւղի
պատճառաւ:

Ամբողջ եօթը տարի, Ռուսիա
մեզի հիւրընկալելով, ապաստանա-
րան մը եղաւ ու մեզի միջոց ըն-
ծայեց մեր ու թուրքիւսական մեր
ընտանիքներուն ապրուստը հանե-
լու: Ն. Վ. Նիքօլա Բ. Կայսեր ու
Ռուսական Յեղին նկատմամբ մեր
երախտագիտութիւնը սահման չու-
նի: Մեր աշխատութեանց ար-
դիւնքովը, չէինք թերացեր մեր
բացակայութեանը միջոցին մեր
ընտանիքներուն վճարելու պար-
տաւոր բոլոր հարկերն ու տուր-
քերն Օսմանեան կառավարութեան
հատուցանելու:

Սակայն ժամանակը եկաւ մեր
ծննդավայրը վերադառնալու, քա-
նի որ չենք կարող ուս կառավա-
րութեան վեհօգի առաջարկութե-
ան օգտուելով, ռուսահպատակու-
թիւնը ընդունիլ, երբ անդին մեր
թուրքիւսական ընտանիքները մեր

քովը Ռուսիա գալու դիւրութիւնը
չունին:

Ու ձգելով ռուսական քաղաք-
ներն ու գիւղերը, ուր ապաստա-
նէր էինք, թուրքառուսական սահ-
մանագիծը համախմբուեցանք.
բայց թուրք կառավարութիւնը,
որ վերջին եօթը տարիներու մի-
ջոցին մեզի իր հպատակները կը
նկատէր ու մեզմէ տուրք կը գան-
ձէր, կը մերժէ ծննդավայրիս մեր
վերադարձը թողաւ:

Ձմեռը կը մօտենայ ու վիճակ-
նիս ողբալի է:

Հետեւապէս հարկադրուած ենք
Ֆրանսական Հանրապետութեան
պաշտպանութեանը դիմելով, Ֆրան-
սական կառավարութեան խնդրե-
լու որ, յանուն մարդկութեան,
մեզի ի նպաստ թուրք կառավա-
րութեան մօտ միջամտէ, որպէս զի
արտօնուինք մեր ծննդավայրը վե-
րադառնալու, ու մեր ընտանիք-
ները գտնելով, մեր արտերն ու
հոգիքը մշակենք:

Ռուսիա ապաստանած ու
թուրքառուսա սահմանա-
գիծը խմբուած Տաճկա-
հայերու ներկայացուցիչ-
ներն ու պատուիրակները
(Ստորագրութիւն)

10/23 Սեպտեմբեր 1902

Թուրքեւոստ սահմանագիծիս

ՍՈՒԼԹԱՆԻ ԴԱՏԸ

"ՎԷԶԷՐՆԱ ԲՈՆԹԱՍԻ ԴԵՍ"

Շար. թիւ 70էն եւ վերջ

Թիւ տուէք ինծի, Բարիզ ա-
պաստանած՝ տաճիկ նշանաւոր
գրագիտուհի Զեքիյէ հանրմի կող-
մէն, Օոթո լրագրին մէջ՝ տաճ-
կական ազգիւրէ քաղելով արտա-
ապուած վկայագրի մը թարգմա-
նութիւնն ընել, որը ամեն մասամբ
կը հաստատէ թէ՛ բոլոր այս ըն-
տանիկան ու հրապարակային սպա-
նութիւնները գործադրուած են
ուղղակի Սուլթանին հրամանով:

Այս տարւոյն մէջ, կրտէ Զեքիյէ
հանրմ, Էդդուար և Էդիկեանի
ոստիկանական կեդրոններուն մէջ,
չատ մը տուններ այրած ու շատ մը

տղաքներ և կիներ սպաննուած են.
սպաննիչները ազատօրէն կը պտտին
ու չը գիտի բանտարկուին ան-
շուշտ, որովհետեւ ամէն ինչ ի գործ
կը դնեն Մարեշալին հրամանով,
որ ինքն ալ իր կարգին կը գործէ
ուղղակի Սուլթանին հրահանգով:

Միեւնոյն ժամօթութիւնները
Մակեդոնիոյ համար ալ կրնայի
գրել, բայց, Տեաքը, հարաւային
ծայրը չենք որ պատահաները չը
տեսնանք. հոս, մեր մէջ մարդիկ
ներ կը տեսնամ այդ բազմաչա-
շար երկրէն, որ իմ ալ հայրե-
նիքս է. ծիծաղելի կըլլայ ան-
շուշտ, եթէ՛ ջանալու ըլլամ ե-
ղածներուն համազել ձեզ, ու-
րոնք շատոնց յայտնի են ձեզի.
Բաւական սուղ կը տեսնամ իմ և
ձեր ժամանակը, որպէս զի զայն
սպաննեմ անգոյ թշնամանքներու
ոչ կարեւոր արդարացումներուն
համար:

Կը յիշեմ թէ Բարիզի Լ'Էնթոքէէն
շարժական հանգէսը՝ որ միջազ-
դային ընկերվարական և այլն խըն-
դիրներու նշանաւոր ու ամենայա-
ջողակ ուսուցչական շրջանակէն
գուրու կեցւայ, իր 35 թուոյն մէջ,
ինծի խորհուրդ կուտայ, Նոյնի
իլլիւստրէին ներկայ տարւոյն Յու-
լիս 24 թիւը ներկայացնել ձեզի,
ուր Սուլթանին սպասաւորողնե-
րուն մէկ պատկերը գրուած էր,
առջեւին ունենալով 5 հատ գըլ-
խատուած պուկարական գլուխ-
ներ:

Յարգելի Տ. Տ. ուսուցիչները ա-
սով ըսել կուզէին թէ՛ այդ իսկ
բաւական է արդարանալու և ան-
պարտ արձակուելու:

Ահաւասիկ այի յօդուածը որուն
համար է խօսքս:

Ն. Վ. Ապուլիւ-Համիտ Իրաւ, ար-
ժանի է «Աստուծոյ Ստուերը» անու-
նին, զոր անոր Օսմանեան մարգա-
րէն կուտայ. Ն. Վեհափառութիւնը
անխոնջ նախախնամութեամբ ու ո-
ղորմածութեամբ մը կը հսկէ մինչեւ
իսկ այն հայեցող էակներու վրան,
որոնք անոր բարութեանցը կը տարա-
կուսին:

Պ. Շանկօֆ, Սօֆիայի Վեյեռնա
Բօսդա լրագրին խմբագրապետը, իր
թերթին մէջ Սուլթանի դէմ ամ-
բաստանութիւններ ընելու համարձա-
կիւ էր, ու վերջիւնք էր հանրաժի-
նը:

ու ընտանեկան ոճիրները այդ ամենա-
անյիշաշար վեհապետին, իրեն հարա-
զատ եղբայր ու օրինաւոր Խալիֆա
Մուրատի այդ բանտապահին, բարե-
նորոգմանց կուսակից Միտհատ փա-
շայի այդ չարչարիչին ու դահիճին,
իր հաշտոյն մարդ սպանողներու այդ
սպանիչին, ու խողխողէին թուր-
քերու, Պուլկարներու, Սերպերու,
Յոյներու, Եգիպտիներու, Տիւրքիւ-
ներու, Քիւրտերու, Արապներու,
Ալպանիացիներու եւ 300,000 Հայե-
րու:

Բ. Դրան կամ Պուլկարիոյ մէջ կայ-
սերական վերին զօւլխերին պահան-
ջուովը, Մ. Շանքօֆ դատի կեն-
թարկուի պուկար դատարաններու
առջեւ. վասն զի, թէեւ Ապուլիւ Հա-
միտի շահատականութիւնները ինք-
նին փառաւոր ըլլան, քաղաքակիրթ
երկիրներու օրէնքը անոնց հրապա-
րակումը կարգիլէ, որպէս զի մի
գուցէ զանոնք գործող մարդուն հա-
մար, սովորական պարզ մանկանա-
ցուններու դատողութեանը առջեւ նսե-
մանայ:

Ն. Կ. Վեհափառութիւնը հաճեաւ
յիշել թէ, երկու տարիի չափ կայ,
համանման դատ մը բացեր էր Ֆրան-
սական դատարաններու առջեւ Պ. Պ.
Իւսպէն Կոնիէի, Շառլ Մալթոյի,
Բիէո Բիյառի դէմ, ու պէտք եղած էր
որ այս ոճրագործները կարեւոր վկա-
ներու, դիւանագէտներու, Պետական
մարդերու անուններ տային, որպէս
զի իրենց դէմ հաւանքը դադրէր:
Սուլթանը այսպիսի ձանձրութիւն
մը Պ. Շանքօֆի խնայել ուզեց ու
արտայայտար Մակեդոնիոյ մէջ նոր սպա-
նութիւններ հրամայելով, իր ուղ-
ղամիտ ծառաները կը հրաւիրէ իրենց
քաջագործութեանցը անհրաժեշտ ապա-
ցոյցները քաղելու:

Աստուծոյ ստուերին հրամանովը ու
որպէս զի մեր Սօֆիայի պաշտօնակիցը
արդարացնեն, Մօնաստրի ոստիկան-
ները իրենց լուսանկարը հանեցին Մա-
կեդոնական կտրուած գլուխներու շար-
քով մը շրջապատուած, ինչպէս ցոյց
կուտայ Նոյնի Իլլիւստրէի 24 Յուլիսի
թիւը: Բաւական պիտի ըլլար այդ
պատկերը պուկար դատարաններու
ներկայացնել, որպէս զի Մ. Շանքօֆ
ազատ արձակուի:

Սուլթանին վայրենութիւնը
պատկերացնող այդ իլլիւստրէին կը
ներկայացնեմ ձեզի, ինչպէս նաեւ
էլ Մոնաստր և էլ Մոնախի լրա-
գիրներէն մէյմէկ օրինակներ, ու-
րոնց մէջ կան փառաւոր ածական-
ներ այդ չարագործին հասցէին—
գազան մարդկային կերպարան-
քով:

Իրեն գլխուն սկաւառակին վրայ

անգղիական թիկ-Պիկ հանգէսը
խորհրդաւոր կերպով ալլաբանա-
կան հետազոտութիւն մը ըրած է,
որուն արդիւնքը նոյնիսկ լրագրին
խօսքերուն նայելով հետեւեալը ե-
ղած է .

Ահաւասիկ լրագրէն հրատարակուած
ալլաբանական գրութիւնը .

Արջաի ալ փափագելի չէ . բայց եւ
այնպէս հատաւորապէս կենթադրուի
ու առջն ոք կը հստակայ թէ, յիշեալ
գրութիւնը թաւիք Սուլթան Համիտի
յոխորտանքներուն բեկորները ներ-
կայացնելու հանգամանքը ունի .

1. Կուրուսթիւն , 2. Անգթութիւն ,
3. Ամբարտաւանութիւն , 4. Նենգու-
թիւն , 5. Յամառութիւն , 6. Ան-
կարգութիւն , 7. Արծաթասիրութիւն ,
8. Օրինազանցութեան կեդրոնացում ,
9. Մոլեռանդութիւն , 10. Չարու-
թիւն , 11. Բռնակալութիւն , 12.
- Վայրենութիւն , 13. Անհաստատա-
կանութիւն :

Իսկ լեզուին ծայրն ալ կը կենայ
«սուտ խոստումներու» նշանը :

ՍՈՒԵՒԱՆԳՈՒՄ

Ի ԺԱՄՀԱՐԵԱՆԻ

Այս հանրածանօթ հայ բարերարի
առեւանգումի մասին Շուշիէ Նոր-
Դարի գրուած նամակէ մը հետեւեալ
հետաքրքրալարժ մասը կարտատպենք .

Այսօր 6ին երեկոյեան ժամը
10ին Մոսկուաքնակ յայտնի ժամ-
հարեան եղբայրներէ մէկը՝ Պ.
Իսահակ ժամհարեան, որ եկած է
այս ամառ իւր հայրենի քաղաքին
մի հսկայական հիւանդանոց նուի-
րելու, քաղաքի ակմբանոցից
(կուրից) մի ծառայի առաջնորդու-
թեամբ վերադառնում է տուն :
Դիւռ տանը չը մօտեցած զբօսու-
վարի կողմից երեք անյայտ ան-
ձինք, երկուսը դիմակով, ելնում

են պարոնի առաջը հետեւեալ հար-
ցով .

— Դ՞ուք էք Պ. Իսահակ ժամ-
հարեան :

— Այո, ես եմ :

Այդ պատասխանի վրայ սուրում
են նրանք և թաքստեան տեղից ել-
նում են էլի մի երեք հոգի :
Սրանցից երկուսը ծառային բռն-
նում են և մահուան սպառնալիքով
տանում են քաղաքից դուրս լեռ-
ների գլխին պահում, իսկ մնա-
ցածները տեղն ու տեղը փոխում
են Պ. ժամհարեանի հագուստը և
մերկացրած դաշոյներով ու առքը-
հանակներով տանում են նրան
խուլ-խուլ փողոցներով . խուլմըն
ստուարանում է . Պ. ժամհարեանը
աչքը մի տան մէջ է բաց անում,
մի դատարկ անիակ տան մէջ,
նրան նստեցնում են յատակի վրայ
այս նոր քեարամները, հաց, պս-
նիր և կոնեակ են առաջարկում
ծիրակալուածին : Ապա մամուլի
անունով խօսում ու պահանջում են
հարկը հազար ռուբլի . «ընտրե-
ցէք՝ երկուսից մէկը . կամ մահ և
կամ վճարեցէք 100,000ը» : Սար-
սափահար Պ. ժամհարեանը հա-
ւատացնում է թէ այդչափ փող
չունի մօտը . և ո՞վ այդքան գու-
մար հետը կը շրջեցնի : Առաջար-
կում են տոմսակ տալ կնոջ վրայ,
որ գնան և իսկոյն ստանան : Պ.
ժամհարեանը հստատեցնում է թէ
կնոջ մօտ այդպիսի գումար չկայ
և չի կարող լինել . խնդրում է
հանգիստ թողնել իւր կնոջը, որ
կաղող է վախենալ, վտանգուի ա-
պարդիւն կերպով : Պ. ժամհար-
եանի խօսքի անկեղծութիւնը ազ-
դում է չարագործներին վրայ :
Նրանց պահանջը հետզհետէ պա-
կասեցնելով հասցնում են երեսուն
հազարի : Չիրակալուածն առա-

ջարկում է մի տոմսակ տալ Նիկիտ
Խանգամիրեանի անունով, որ գնան
և պահանջուած գումարն ստանան,
իսկ եթէ պակաս լինի, խոստա-
նում է յետոյ լրացնել : Չարա-
գործները նախ համոզում են,
ապա յետ են կենում այդ տեսակ
գործունէութիւնից և առաջարկում
են մի խոստումսգիր տալ, որ վաղն
և եթ ժամի 10ին 30,000 ռուբլին
ինքը ժամհարեանը միայնակ իւր
կապուտակ ձիով տանի Պիսի աղ-
բիւր կոչուած անտառոտ տեղը .
այնտեղ նրա առաջը դուրս կը գտն
երկուան իրենցից, թաշկինակով
նշան կանեն, կստանան փողը և
գործը կը վերջանայ : Իսկ եթէ
ժամհարեանը իւր խոստումը չը
կատարի, անպատճառ կը սպան-
նեն : Ապա խոստումն են պահան-
ջում, որ ոչ ոքի չտան : Պ. ժամ-
հարեանը գրում է խոստումագիրը .
նրան հանում են անձանօթ տնից,
բարձրանում են դէպի լեռը, սու-
լում են . այդ ձայնի վրայ միւս
ընկերները իջնում են ծառային,
պահանջում են ժամհարեանից որ
ծառային սաստէ լուռ մնալու և
գաղտնիք պահելու . ապա հազցնում
են նրան իւր իսկական հանգերձները
և յանձնում են ծառային, որ տուն
տանէ : Առաւօտեան ժամի 3ին Պ.
ժամհարեանը տուն է գոյիս ան-
սափահար, ապշած, հոգեպէս տան-
ջուած վիճակի մէջ . կործում ենք
թէ այդ վայրկեանին Պ. ժամհար-
եանի երեւակայութեան առաջ կը
պատկերանար ակամսոյից այն ա-
մեն բարիքները, որ նա արիւ էր
հայ ուսանողութեան, ժողովրդին,
քաղաքին, որով առեւել պիտի
դառնանային այդ վայրկեանները :
Ապերախտ մահու ճանկից ազատ
ուած մարդը ճշուած կրծքից մի
հաւաքանք է արձակում իւր յարկի

տակ . զարթում են կանայք և մի
բարերարուած ազգական ուսանող,
որոնց առջեւ պատմում է նա իւր
գլխի անցքերը մինչեւ լոյս : Ոս-
տիկանութեանը լուր է հասնում
պատահած անցքի մասին :

Ի դէպ, չարագործներն ի միջի
այլ սպառնալիքների յայտնել
էին թէ՛ եթէ ժամհարեանը 30,000ը
չտայ, ոչ միայն իրեն, այլ և միւս
երկու եղբայրներին առաջը կը կըտ-
րեն ճանապարհին և նրանց էլ կը
սպաննեն . այդ օրը ժամհարեան-
ների աւագ եղբայր Յովհաննէսը
Մոսկուայից Եւլախ եկած է լի-
նում Շուշի գալու համար, իսկ
միւսը՝ Պ. Աղաջանը գնացած է ե-
ղի Եւլախ ընդ առաջ : Ոստիկա-
նութիւնն անմիջապէս կարգադ-
րում է կազակներ ուղարկել ընդա-
ռաջելու ճանապարհորդ ժամհար-
եաններին . ապա չարագործներին
կալանաւորելու ետեւիցն են ընկ-
նում :

Ոստիկանատան պաշտօնեաներից
մէկին՝ որ դէմքով նման է Պ. Ի-
սահակ ժամհարեանին, հազցնում
են վերջինս շորերը, նստեցնում
նրա ձին և ուղարկում Պիսի աղ-
բիւրը : Նշանակուած տեղին մօ-
տեցած ժամանակը երկու երիտա-
օսրդ թաշկինակներ շարժելով
ընդաւալ են գալիս և պահանջում
փողը . նոյն վայրկեանին հասարակ
թրքական շորերով մօտեքումը
չըլող ոստիկանները ձերբակալում
են շանտաժիստներին և քաղաքի
բանտատանն են յանձնում :

Ոստիկանութեան ձեռք առած
հռանդուն միջոցներն առ այժմ հե-
տեւեալ արդիւնքներն են տուել :
Չարագործների գիշերային օթե-
ւանը Ամբրումեանների մի տունն
է . այդ տունը (բոլորովին դատարկ)
մի շարաթ առաջ վարձած է եղել

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(21)

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ը

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐԻՒՆԱԼԻ ՔՈՒՄԱՍԵՐ...

Արարուց-Դուռնէն ինչուան Աւանց կոչուած ար-
ուարձանը քառորդ ժամ մը հեռաւորութիւն կար .
Միւրօ ախպար տունից կանգ առնելու ածապարից
հոն հասնելու :

Երբ արուարձանին մօտեցաւ, ահա՛ անձերը
սկսաւ տեղատարափ դառնալ :

— Անիծած... մրմնջեց Միւրօ ախպար ինքնիրեն՝
ու պատի տակերէն քալելով, փողոց մը մտաւ եւ
գուռի մը առջեւ կեցաւ :

Դուռը զարնելուն պէս, կամացուկ մը բացուեցաւ
ու Միւրօ ախպար ներս գնաց :

— Ի՞նչու ուշացար, հա՛յր իմ, հարցուց մանկա-
մարդ աղջիկ մը՝ խանդաղատելի ձեւով մը Միւրօ
ախպար ձեռքը բռնելէ ետքը :

Այս մանկամարդ աղջիկը Լաւիզարն էր :

— Իրա՛ւ ես... այսօր ուշ մնացի, պատասխանեց
Միւրօ ախպար՝ աղջկան ճակատը համբուրելով :

— Երկու օր է որ Վանական չերեւար, հա՛յր
իմ, արդեօք ի՞նչ եղաւ իրեն :

— Մի՛ կասկածիր, աղջի՛կս, Վանական եթէ
այս գիշերը չի գայ, վաղը անպատճառ պիտի վե-
րադառնայ :

— Ա՛խ, ի՞նչ ընեմ... ամեն ատեն մինակ կը
թողուք զիս այս ողորմելի տունին մէջ : Շաբաթ
մըն է որ Լուսիա գնաց ու դե՛ռ չեկաւ :

— Գործն անա՛նկ կը բերէ, աղջի՛կս : Դուռն մի՛
նեղուիր : Բիշ ատենէն ասկից ալ պիտի հեռանանք :

— Խուժբի՛ն մօտ պիտի երթանք :

— Նախ՝ խուժբին մօտ պիտի երթանք : Անկից
ետքը՝ Հայոց Ձորի ամենէ՛ն ապահով գիւղը պիտի
մնաք :

Հայրն ու աղջիկն կը խօսէին իրարու հետ, յախ-
կարծ գուռը զարնուեցաւ կամացուկ կերպով մը :

Միւրօ ախպար ածապարանքով մը գնաց Դուռը
բանալու : Եկողները ներսէս Արծրունին ու իր հօր-
բոյրն էին :

— Ո՛հ, ինչքա՛ն թրչւած էք, մրմնջեց Միւրօ
ախպար :

Ու առանց սպասելու՝ անոնց վրայի հապան ա-
ռաւ, անոնց գլուխի ծածկոցները քակեց ու խան-
դաղատանքով մը ներս հրամցուց գիրենք :

Լաւիզար չէր տեսած ներսէս Արծրունիի հօրքորը .
միայն թէ խնայած էր որ Արարուց թաղին մէջ կը
բնակէր ան :

Ներս սենեակը մտան, անուշ ժպիտով մը ներսէս
Արծրունին մօտեցաւ մանկամարդ աղջկան ու ըսաւ .

— Ահա՛ իմ հօրքորս, Լաւիզար :

Շնորհալի աղջիկը գորովանքով մը համբուրեց բա-

րի պառաւին ձեռքերը եւ ծոցաւ անոր սրելները
քակելու :

— Ի՞նչ կընես, աղջի՛կս, մրմնջեց պառաւ կինը՝
քաշելով իր ոտքը :

— Բան մը չէ, մայրի՛կ, դուռն յոգնած ես, ես
պիտի քակեմ տրեխներուը ջուանները :

— Ա՛մենեւի՛ն . ես չեմ կրնար ընդունիլ :

Վերջապէս եկողները քիչ մը հանգչելէ ետք,
սկսան խօսակցութեան : Ներսէս Արծրունին իր
հասար ծխափողը բերնէն հանելով հարցուց .

— Յաջողեցա՞ր, Միւրօ ախպար :

— Յաջողեցայ, պատասխանեց Միւրօ ախպար :

— Ո՛ւր է... բացազանչեց Ներսէս Արծրունին
այնպիսի ձայնով մը՝ որ կը խղզուէր կարծես :

— Ահաւասիկ, չեչուեց Միւրօ ախպար ու ծոցէն
հանելով դաշոյն մը տալու ներսէս Արծրունին :

Այդ դաշոյնը մեր ծանօթ նուիրական դաշոյնն
էր, որ չորս տարիներէ ի վեր կը մնար Վանի բան-
տին մէջ : Մէկ խօսքով՝ այն օրէն ի վեր՝ ուր Վա-
նական իր ոճիւր գործած էր եւ գիտէր թէ կախա-
ղան պիտի բարձրանար, այդ դաշոյնը զնտանի մը
անկիւնը պահուած էր :

— Ո՛հ, կեանքիս ամենէ՛ն նուիրական յիշատակը,
ահա՛ կը գտնեմ քեզ, մրմնջեց Ներսէս Արծրունին
համբուրելով զայն : Դարբե՛ ի վեր հայրենական
ժառանգութիւնն էիք : Եւ սրբագործուեցար, երբ
Վանականի մը պէս հայրենասէր մարդու մը ձեռքն
ինկար :

(Շարունակելի)

մի վերին աստիճանի քաղաքավարի
երկտասարդ, որ իւր անունն ու
ազգանունը լիպցցիւն է և միայն
Ալեքսանդրապոլցի է անուանել ի-
րեն. տանտիկնոջ հետ պայման
կապիւց յետոյնա յայտնել է թէ
գնում է Ալեքսանդրապոլ կնոջն ու
երեխաներին բերելու և անյայտա-
ցել է: Խուզարկութիւններ են ե-
ղել մի քանի տներում և իրեր են
գտնուել: Գործը շարունակուում է.
մերկացումները լինում են:

Ընթերցողը երեւի կը կարծի
թէ այդ շարագործները Տաճկաս-
տանի սարերից եկած տաճիկ ա-
ւազակներ են, որոնք միայն Տաճ-
կաստանում ընդունուած եղանակով
են կողոպուտ անում, կամ գուցէ
կը կարծի թէ սովորական աւա-
զակներ են, տգիտութեան վիժ-
ուածքներ. բայց չէ. սրանք ուս-
եալ սրիկաներ են, անարգ մամուլի
խակ վիժուածքներ, նոր տեսակի
խայտառակ եղութոյն: Եթէ հայ-
րենիքի անունը, վեհ գաղափար-
ները, կենդանի խօսքի սրբութիւնը
չահագործութեամբ պղծող այս նո-
րելուկ աւազակները սարսափով
գրամ շորթի կամեն այն մի ժլատ,
բարիք անելու տրամադրութիւնից
խապառ հեռու մի հարուստից, թի-
րեւս այնքան զղուանք չը պատճա-
ռէին. բայց նրանց արարքը ժամ-
հարեանների վերաբերմամբ խայ-
տառակ ապերախութեան սեւ
կնիքն է կրում: Ծառ աղբատ ու
աննողներ ժամհարեանների առա-
տաճեանութեան են պարտական
իրենց ուսմամբ, շատ աղքատ ըն-
տանիքների տան ճրագը ժամհար-
եանների շնորհիւ է վառուած. երբ
ձակ ազգասիրութիւնն ու համիդիէ
հեծեալադրքը համբարաշխ դաշնակ-
ցութեամբ հայ ժողովրդի մի
ստուար բազմութիւն սրախողիող
արին, որբերին տէր կանգնողնե-
րից առաջինը ժամհարեաններն ե-
ղան, որոնք ցայսօր 200ի չափ որ-
բեր ունին Մարաշում յատուկ որ-
բանոցով, որի համար տարեկան
10 հազարներ են տալիս. հայոց
ուսումնարաններում գրադարաններ
չկան, որ ժամհարեանները գիրք
չունենան. եկեղեցիներ ու վանքեր
չկան, ուր նրանց օգնութիւնն ըն-
կած չլինի. դեռ թարմ են ոգե-
ւորութեան աղաղակները, ծափը
ժամհարեանների վերջին բարիքի
առաջ, երբ 200,000 ռուբլու նուի.
բարերութեամբ իրենց հայրենի
քաղաքին հիւանդանոց տուեցին.
Ժամհարեանները և շատ մարդա-
սիրական գործեր են կատարել.
Նրանք իմացել են կայսերը՝ կայ-
սեր տալ, և Աստուծուն Աստու-
ծու:

Եւ ահա այս տեսակ մարդկանց
վրայ է բարձրանում շանտաժիստի
ձեռքը, ժողովրդի վատահոլութիւնը
դէպի մեր կեանքի բարոյական
վերածնութիւնն սպանող շարա-
գործի դաշոյնը: Սարսափում ես
այս զղուելի ապերախութեան
առաջ, որ անարգ մամուլի վիժ-

ուածքների ծնունդն է, թուաւոր
շունչն է. սոսկալով բացականում
ես. «վսեմ ու սուրբ իդէալներ, որ-
քանք քնքոյշ էր դուք. անարգ
մամուլի շունչը, արծաթի սէրը
ձեզ գիպչելով ալլասեալում ու ցեխ
են դարձնում ձեզ»:

ՕՐՈՒՆԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Նախորդ յօդուածի մը մէջ պա-
տեհութիւնը ունեցանք, Բենսիլվա-
նիոյ հանքագործներուն մեծ բան-
թողը, անոր շարժառիթներն
ու հետեւանքները ընթերցողնե-
րուն ծանօթացնելով, դրչաւտ ան-
ուանուած կազմակերպութեանց
վերաբերութեամբ մէկ քանի
խօսք ընել. դրչաւտներու խնդիրը,
որ վերջերս մանաւանդ ամերիկացի
միլիառատէր Բիէպօն Մօսկանի
Ատլանտեանի նաւարկութեան դը-
րչաւտը յաջողցնելուն առթիւ մի-
ջազգային ռաժմէական կերպարանք
մը ստացաւ ու Եւրոպական Պե-
տութեանց աշքին ահարկու վտան-
գի մը համեմատութիւնները առ-
նելու սկսաւ, հին աշխարհի դի-
ւանագէտներն ու տնտեսագէտները
լրջօրէն մտաւտանջութեան կենթա-
կէ. դրչաւտը—այսինքն, ինչպէս
նախապէս կրցանք բացատրել, այն
ստորոգի շահագործութիւնը՝ որուն
համեմատ մէկ քանի միլիառատէր-
ներ երկրին զանազան արտադրու-
թեանց աղբիւրներուն կը տիրանան
ու այսպէսով իսկ մրցակցութեան
որ և է կարելիութիւն չարտնելով,
ազատ կը մնան, առանց երբեք
հանրութեան միջոցը նկատողու-
թեան առնելու, ուղածունն չափ,
ուղածունն պէս այդ արտադրու-
թեանց գինը բարձրացնելու, —
դրչաւտը այժմ, հայեցողական նկա-
տողութեանց չը կրցած իրագոր-
ծելու նկրտելով, հմայքը կուեն-
նայ Եւրոպական Պետութիւնները
ուշքի բերելու, ու զանոնք հար-
կադրելու որ մօտ ապագայի մը
մէջ հաւասարապէս բոլորին ալ
երկրագործութիւնն ու ճարտար-
արուեստը հիմնովին փոփոխելու
սպառնացող հասարակաց վտանգի
մը դէմ համբարաշխութեամբ պաշտ-
պանուին. Բացատրենք. այսօր,
Ամերիկա լրջօրին կապառնայ հին
աշխարհի առոււտուրը փոփոխել.
չկայ արտադրութեանց տեսակ մը,
ճիւղ մը ուր Եւրոպայի որ և է մէկ
երկրի վրայ ամերիկեան հսկայա-
քայլ յառաջխաղացութիւնը աշքի
չը զարնէ:

Օգտուելով փոխադրութեանց
անհամեմատ դիւրութեան, Մ.
Նահանգներու երկրագործական
բերքերը Եւրոպայի հրապարակ-
ները ողողելով, ամէն երկրի տե-
ղային երկրագործութեան մահացու
հարուածներ հասցուցին. նոյն բանը
կրկնուելու վրայ է ճարտարա-
ուեստի (էնտիսդի) վերաբերու-
թեամբ ալ: Մինչ եւրոպական եր-

կիրները, որ և է կատարեալ բար-
գաւաճում խաբանող զինուորակա-
նութեան ու ռազմական կարգադ-
րութեանց տակ կը հեծեծեն, Մ.
Նահանգները, գերազանցօրէն հան-
րապետական երկիր, յար կը յա-
ռաջիմեն, շնորհիւ ուրիշ երկիր-
ներու բաղդատմամբ բնակչութեան
անհամեմատ բազմանալուն (որը 30
տարուան մէջ կրկնապատկուեցաւ),
շնորհիւ փոխադրութեանց համար
մեծապէս նպաստաւոր երկաթեայ
անհամար ցանցերու (որոնք աշ-
խարհիս ամենէն ընդարձակներն
են), շնորհիւ մանուշաղ առեւ-
տըրական կանոնաւոր նաւատորմի
մը, որ բացառապէս աժան սա-
կազներով արտադրութեան միջոց-
ները մեծապէս կը դիւրացնէ: Եւ-
րոպական երկիրներու անծանօթ
այս զանազան առաւելութեանց ու-
ժով, Մ. Նահանգները կը յաջողին
իրենց գերադրապէս բեղմնաւոր
հողին զանազան արտադրութիւն-
ները, չնչին ծախքերով Եւրոպա-
փոխադրել, ու Եւրոպական հրա-
պարակներու վրայ այնպիսի մըր-
ցում մը հաստատել, որուն ոչ մէկ
երկիր դիմադրելու կարող եղած է.
վերջին 10 տարիներու միջոցին
միայն, Մ. Նահանգները երկաթի-
դէն, պողպատեղէն, մեքենական,
ածխային արտադրութեանց մէջ
Եւրոպայի վրայ ջախջախի առաւե-
լութիւններ ունեցան. ածխահան-
քերու դասական անսպառ երկիրը՝
Անգլիան այսօր շատ ետ կը մնայ
Ամերիկեան ածխահանքերու ար-
տադրութեան առջեւ, ուր 1890էն
1901 թ. ամուսի արտադրութիւնը
140 միլիոնէ 235 միլիոնի բարձ-
րացած է. իսկ պողպատեղէնը,
նոյն ժամանակամիջոցին մէջ,
1,200,000է 2,500,000ի բարձրա-
ցած է:

Ամերիկեան այս անդիմադրելի
ու հեղհեղեղ ստուարող յառաջ-
խաղացութեանց հանգէպ, հին աշ-
խարհի մէջ անձկութեան աղաղակը
ընդհանուր է. կուրսովս կոմսն
էր, Աւստրո-Հունգարիոյ Դիւա-
նապետը, որ համանուն պառգա-
մաւորութեան առջեւ, երեք տարի
առաջ հին աշխարհի սպառնացող
վտանգը կը մատնանէր. իսկ այս
օրեր, Ռեքիսլիք Ֆրանսէզի Տնո-
րէնը, Ժիւլ Մէլին, Ֆրանսայի նախ-
կին նախարարապետ ու երկրագոր-
ծութեան նախարար, նոյն թերթին
մէջ կը գրէ այս խնդրոյ առթիւ.
«Ամէն կողմ կուտակուող ամպերը
ապագային համար սեւ կէտեր են,
որոնք կարծաւած են աւելի շուտ
կրնան Ֆրանսայի ու Եւրոպայի
ճարտարարուեստին համար փոթո-
րիկի փոխուիլ»: Ուրիշներ նմա-
նապէս այս հարցով կը շահագրգ-
ռուին. Խալաթի երեսփոխան ու
նախկին նախարար Մ. Լուցէդի-
կը հրաւիրէ Աւստրիան որ նախա-
ձեռնութիւնը ունենայ Եւրոպական
միջազգային համաժողով մը գու-
մարելու, հին աշխարհի շահերը
պաշտպանելու համար: Ամերիկեան

յառաջխաղաց ոտնձգութեանց զօ-
րեղապէս դիմադրելու նպատակով,
Եւրոպական Մ. Նահանգներու մը
հիմնարկութիւնը—գոր. վ. հիւկօ
յղացեր էր բանդագուշող մը կար-
ծուելու վտանգով—այժմ աւելի ու-
րոշ, աւելի համարձակ վստահու-
թեամբ մը սեղանի վրայ կը դըր-
ուի. արդէն, վիկտոր Էմմանուէլ
Գ. Բեդրսպուրկ այցելութեանը
առթիւ, երկեակ ու երրեակ զի-
նակցութեանց միջեւ մերձեցումի
մը վրայ խօսքեր եղան:

Յայտնի կերեալ թէ, միջազ-
գային ապագայ քաղաքականու-
թիւնը պիտի համախմբէ Եւրո-
պայի ցամաքային Պետութիւնները
—երկիւղի ու շահու նոյն պատ-
ճառներով—ամերիկեան ծաւալու-
մին դէմ ամբարտակ մը կանգնե-
լու:

Տ. Է.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կաթողիկոսը, շաբաթ Սեպ-
տեմբեր 21ին, Թիֆլիսէն, կարսի
երկաթուղիով Ս. Էջմիածին մեկ-
նած է:

—Նորին վեհափառութիւնը
սրբատառ կոնգակով իր գոհունա-
կութիւնն յայտնած է Նախիջե-
ւանցի զօրավար Իսմայիլ խանին,
որ նոյն քաղաքի Ս. Գէորգ եկե-
ղեցիին երկու հողային կալուած-
ներ նուիրած է:

—Ժամհարեանը առեւանգողնե-
րու մասին ռուսական Բակ. Իզ-
վեստիա լրագիրը ի միջի այլոց
հետեւեալ տեղեկութիւնները կը
հաղորդէ.

Չարագործներից մէկը նստեց ժամ-
հարեանին դիմացը յատակի վրայ եւ
ասաց նրա. «Մենք արտասահմանի
հայ յեղափոխական կոմիտէի լիազօր-
ներ ենք եւ ուղարկուած ենք այստեղ
տեղական հայ հարուստներից փող հա-
ւաքելու սուրբ գործի համար. լսեցէք
կոմիտէի կոչը եւ կիմանաք, թէ ին-
չու ենք բռնել ձեզ»: Այս ասելուց
յետոյ նա կարգաց հայերէն լի կոչ,
որի մէջ ասուում էր, թէ անհրաժեշտ
է փող հաւաքել հարուստ վաճառական-
ներից ընդհանուր գործի համար, եւ
ապա կոչն այրեց:

—Պոլսոյ Տնտեսական Խորհուր-
դը Պատրիարքին ներկայութեամբ
ու նախագահութեամբ կարեւոր
նիստ մը ունեցեր է. թէեւ ըստ
Ազգ. Սահմանադրութեան, Պոլ-
սոյ Պատրիարքը, Էմր Ազգ. կեդր-
վարչութեան նախագահ, Պատ-
րիարքարանի իրաւասութեան ներ-
քեւ գործող բոլոր ժողովներ-
րուն նախագահելու իրաւունքը
կը վայելէ, սակայն այս վեր-
ջինը ընդհանրապէս Տնտեսական և
Ուսումնական Խորհուրդներու նա-
խագահել զանց կընէր: Պատրիար-
քարանի պիւտեճէն կանոնաւորելու
խնդիրը վերջերս սուր կերպա-
րանք մը առած ըլլալով, Պատ-
րիարքը հարկ դատած է անձամբ
խնդիրը ձեռք առնել. այդ նստին

մէջ Պատրիարքարանի պիւտճէն կանոնաւորելու համար, հասոյթ. ներու գանձումին մասին, ինչպէս ուղղակի Պատրիարքարանի ձեռքով տնտեսներէ գանձուած տուրքը մուխտարներու յանձնելու խնդրոյն վայ խորհրդակցութիւն կատարուելէ. յետոյ Պատրիարքարանի ելմտացոյցին մէջ խնայողութիւններ բնելու կարելիութեան վրայ ալ կարծիքի փոխանակութեան մը ետքը, յառաջիկայ նիստին մէջ Գաղտնաբան ժողովոյ տրուելիք տեղեկագիրը մը պատրաստելու որոշում տուեր են:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սապրգ Տիարպէքիւր վալիսի ճանի մէջնուր էնիս բաշանըն Հալէպ վալիի կինտէն տախի կէշէնէրտէ տէօվէթլէրին թալէպի իւզու թարտ ոլընտըղընտան սօնրա, պու տէֆա աշը պիր ճանի Տիարպէքիւրէ վալի նասպ ոլընմըլ տըր. պու եէնի վալի սապրգ Մանասթըր վալիսի Ֆայիգ բաշանաւ մընտա պիր հայտուտ ոլուպ, էվ վէլթի մէմուրիէթինտէ իճրա իթմիշ ոլտըղը խապասէթ ու զատ տարլըգտան տօլայը Աւստրիա տէվէթի տէֆաթլէ Սուլթանա բըրթէսթ իթմիշ վէ Սուլթան մէգպուրի պիր գօմիսիօն թայինի իլէ մէղգու մէլուներն ճէրաիմ վէ իւրսըղըղալարընը քէթմ ու սէթր իտէմէյուպ, անը թարտ իթմէյէ մէգպուր ոլմուշ ըտը. իշթէ պու կիպի պիր ալշաղը եէնիտէն Տիարպէքիւրէ վալի կէօնտէրմիշլէր տիր. հալպուքի Տիարպէքիւր Մանասթըր կիպի. էվրոքանըն կէօլլէրի էօնիւնտէ ոլմատըղընտան Ֆայիգ օրատա տահա սէրպէսթ սուրէթտէ իճրա խապասէթ իտէպիլէճէք, վէ պու սալէթէ միւքեաթթա նայիլ ոլմուշ ոլաճագ տըր. իշթէ Սուլթան Համիտ տէվրինտէ ճանիլէրէ միւքեաթթա վէ մուղլում լարա միւքալթ գայիտէ հիւքմիւնէ կիրմիշ տիր:

Ֆոգաթ Տիարպէքիւրտէ պուլընան էվրոքալը գօնսուլար Ֆայիգին թայինինտէն տօլայը տէօվէթլէրին տըգգաթընը տալէթ իթմիշլէր տիր. պէլթի պու պապտէ էլշիլէր մէրգուլըն ալընը թալէպ իտէճէլլէր իսէտէ, պու թալէպէ իթթիֆա վիրիլմէք իշիւն պէլթի տէ սէնէլլէր կէշէճէք տիր. նասըլթի էնիս բաշանըն սօն ալըլը իշիւն 3-4 սէնէ լալըմ ոլտու:

— Սթանպուլտան Սօֆիա թարիգի իլէ Հոկտեմբեր 15տէ թաւնա աթիտէքի թէլէկրաֆ վէրիմիշ տիր:

«Մաքէթնիալը գօմիթէ ազալարըն Պուլկարիա սինօրլարընտա վէ Րիւ Մանասթըրընտա թօրլան:

մալարընտան տօլայը Պապը Ալի. նին տէօվէթլէրէ կէօնտէրմիշ ոլտըղը սիրքէլէր-նօթայա ճէվպէն, ինկիլիզ, Րուս վէ Աւստրիա տէօվէթլէրի Սօֆիայա թալիմաթ վէրմիշ ոլտըղալարընը Պապը Ալիյէ պիլտիրտիլէր. Գէզա Պուլկարիա հիւքիւմէթի Մաքէթնիայա կէշմէք իսլէյէն չէթէլլէրի մէնն ու թաազիպ իտէճէլլէր տայիլը Պապը Ալիյէ եէնի վատար իթմիշ տիր»:

— Թիւրք սուլարընտա պալըգ ալընըղը իտէն էճնէպիլլէրի թիւրք նիզամընա թաթպիլէն մուհաքէմէ իթմէք խուսուսընտա Պապը Ալի. նին գարարինա գարըր ինկիլիզ էլշիլէր իթիւրազաթտա պուլընմըլ տըր:

— Պուլկար չէթէլլէրին հէր թարաֆտա մաղլուպ ոլտըղալարը Սթանպուլըն թէսմի տարիլէրինտէ սէօլլէնմէքտէ իսիշ:

Ասըլարտան էքսէրիսի պուլկար օրտուսընտա գուլլանըլան սիւհալարը վէ Մանիսէր թիւքիլլէրի թալըմագտա ոլտըղալարը մահէլլի թիւրք հիւքիւմէթլէրի Սթանպուլ իսպար իթմիշլէր տիր:

— Պուլկարիանըն Մաքէթնիա գօմիթէսինի լաղվ իտէճէկի Պապը Ալիյէպիլտիրիլմիշ վէ պու հալպուքի Սթանպուլ թիւրք տարիլէրինտէ էյի թէէսիւր հասըլ իթմիշ տիր:

— Հոկտեմբեր 15է գատար 6,000 ասքէր Տէմիր-Հիսարա իմտատ կէօնտէրիմիշ տիր:

— Հոկտ. 17 թարիլի Սթանպուլտան Բ. Քոնստանտինուս նամ վիէննա կազէթասընա վէրիլէն թէլէկրաֆ տէյօր. «Հէման պիւլթիւն էլշիլլէր» Րուս սէֆիրինին Րահպէրիկի իլէ Պապը Ալիյէ միւրաճաթլէ, Մաքէթնիալը չէթէլլէրէ գարըն ասքէրիլէ սըղը թէտպիլլէր իթթիֆա ոլընմա. սընա՝ ալա էճնէպի տէվէթլէրտէն միւտախէլլէ ոլընմալաճաղըն տայիլը Պապը Ալիի թէմիւն իթմիլէր. էլշիլլէրին իշալ թէմիւն վէ հարէքէթի Սօֆիատաքի գօնսուլարըն պուլկար հիւքիւմէթլէն Մաքէթնիա գարըրըղըղալարընա գուլլէթ վէրմէմէք վէ պու պապտէ հասըլ ոլմուշ ոլան չիւքէլլէրի տէֆ իթմէք իշիւն՝ միւպէթ տալլան. մամասը խուսուսընտա վէրմիշ ոլտըղալարը նասալթա միւթապըգ ոլուպ, գարըրըղըղըն Պուլկարիա տան ետարըմ պուլաճայաճաղըն վէ պիւնան ալէյհ մուկաֆագիլթ հասըլ իտէմէլլէրի կէօնտէրիլ:

«Պուլկար սինօրընտա ասքէրիլէ գօրտօնըն կիթտիքէ սըղըլարը մագտա ոլան թիւրք հիւքիւմէթի Մաքէթնիայալը թէսքիւն իթմէք իշիւն՝ հաղընէն պիւլթիւն խաթթալարտա շէտիտ պիր ալէլլայաթա պաշայաճաղը պէլլէնիլլէր»:

— Սթանպուլտէն Սթանպուլ կիտէն թէլէկրաֆ խաթթը 20 քիլթմէթրօ գատար պուլլումըլ տըր:

— Բէթիլլէ, Ճուսա, Պարա վէ

Քրէսնա գաղալարըն աշվալը միւտ. հիշ տիր. օրալարա եէնի ասքէրլէր կէօնտէրիլլէր»:

— Բէթիլլէնին հաղարըրի զրէ, սինօրա ետքըն ոլան չօգ քէօլլէրի թիւրքլէր նագմըլար. Պաթագա հաղըն ոլան պիր օրմանը թիւրքլէր թիւթուշարմըլ ոլուպ, եանկըն Պուլկարիա սինօրընա գատար իլէրլէմէքտէ իմիշ:

— Պուլկար կապէթալարըն եաղալարը խիլաֆընա օլարագ. Սթանպուլտէքի ինկիլիզ գօնսուլարըն. եանըն սէօլլէնտիկի գատար գուլվէթլի վէ էհէմիլլէթլի ոլմատըղընը հաղմըլ տըր:

— Թիւրք հիւքիւմէթի Սթանպուլ կաղէթալարընտա պիր ըսմի իլան նէշր իթմիլլուպ, Սթէլլէր վէ ճիվար պիր գօն գաղալարտա պաշ կէօնտէրէն պուլկար էլգիլար (°) ասքէրի շահանէտէն մաղլուպ ոլտըղալարըն, վէ պու էլգըլարըն թէլլիլլէրէ գարըլուպ, օնար իլէ պէրապէր տաղա չըգմըլ ոլան պուլկար էօլլիլլէրին շիմտի խանէլլէրինէ կէլմէյէ միւսաաթէ ոլընմասը իշիւն աթվը շահանէ իսթիւհամ իթմիլլէրինի, վէ օնարա մէրհամէթէն Սուլթան աթվ իթմիշ ոլտըղըն պիլտիրիլլէր. կէօնտա մէքքիւր քէօլլիլլէր շիմտի էլգըլարտան գապուլ իթմիլլէրի սիւհալարը իլէ պէրապէր հիւքիւմէթլէ թէսիւմ ոլըլարը մըլ:

ՏԱԽԻԼԻԹԷ

Ժէնէրալ Ջօշէվին գօմիթէսի պիր իլաննամէ իլէ՝ Պուլկարիատա միւթէմէքին պիւլթիւն Մաքէթնիալըլարտան իմտատ վէ իանէ իսթէմէքտէ տիր. թաւնըն Սօֆիա մուլպիլլի պու խուսուստա գօմիթէնին տգէնի պիլթիշ ոլմագգ տէյօր:

— Իսթիֆա իթմիշ ոլան պուլկար գապիլլէրին գօմանտալար լալընտա Մաքէթնիատա իսթիլլալ գալտըրան տարլարըն Պուլկարիա իլէ վէ Պուլկարիատա պուլլան Մաքէթնիալարըն իլէ մուլապէրէ իթմէմէլլէրի իշիւն՝ սինօրլարա էյի տըգգաթ իտիլլէսի պալընտա էվրոքա տէօվէրի թիւրք հիւքիւմէթին թէլլիլլէրի իւզրէ Պուլկարիայա տօթմանէ նասալթ իթմիշլէր տիր:

Պուլկարիատանըն վիւքէլա ըլլիսի Մ. Տանէվ տէօվէթլէրէ վէ պա խուսուս Րուսիայա «պու պապտէ էմին ոլըն» տէմիշ տիր. Ֆա. գաթ Մ. Տանէվ Սօֆիատաքի թիւրք գօմիսէրինէ վէրտիկի պիր նօթատա իլալլէթէն չէօլլէ սէօլլէմիշ տիր. «գաթի իմիտ ոլուպ տէ էօլմէք իսթէլլէրին քիաֆէ. սինի մահպուս իթմէլլիկիմ միւլթիւն տէկիլ տիր»:

— Հարապի նագըրը Մ. Բար. Րիքով սինօրը մուհաթագա իտէն գօրտօնը, պա խուսուս Րիւս, Բէ.

րին վէ Րօտօր ճիվարըն տըգգաթլէ հըֆը իթմէք իշիւն հէր պիր թէտպիլլի իթթիլաղ իթմէքտէ ոլտըղը կիպի, տախիլլէ նագըրը Մ. Լուքսանով տախի Ջօշէվ-Միլիտարիլլուքի գօմիթէ սինի տաղըտաճագ տէնիլլէր»:

ՄԻԻԹԷՆԷՎԼԻԹԷ

Սերպիանըն հէլլէթի վիւքէլալը իսթիֆա իթմիշ ոլուպ գրալ եէնի հէլլէթ թէլլէլ իթմիշ իսէտէ, պու հէլլէթ տախի մուլթէլիֆ ֆըրգալարա մէնսուպ զաթլարտան միւթէլլէրիլլէր ոլաճաղընտան, շիմտիտէն միւքիւլաթա ուղրատըղը մահէլլինտէն պիլտիրիլլէր»:

Գրալ վէ գրալիցանըն Ջարըլի. լարէթ իթմիլլէրի իշիւն էլան կիւն թային ոլընմամըլ տըր:

— Պօէր ժէնէրալար Պէրլինէ կիլթմիշ ոլուպ, մախուսի իճթի. մալարտա իրատը նուլթ իթմէքտէ տիրլէր. ժէնէրալար նուլթալարընտա տէյօրլար քի. էվրոքալը վէ բարթալարը կէլմէլլէրի սիլաաի պիր մագսէտէ մէպիլլէր ոլմայուպ, իլլա մուհաթէպէ սէպէպի իլէ սէ. ֆիլ գալան էօքսիլլէրէ, տուլ գատընլարա վէ սագաթլարա իանէ թօրլաճագ իշիւն տիր:

ՍՐԱՀ "ՍԱՆԴՐԱԼ"

Վաղը, հինգշաբթի գիշեր Նասիփսա (Յոյս) հայ դերասանական խումբը պիտի ներկայացնէ «Պաղատողի մը կենաց երեսուն տարին» սրտաշարժ թատերախաղը, 6 արար:

Խիստ ծիծաղաշարժ գաւնշտ 1 արար տաճկական կեանքէ առնուած:

ԳԻՆԵՐԸ. — Օրեակի, թիւ 1 ֆր. 8, թիւ 2, 3, 4, 5 ֆր. 5, թիւ 6, 7 ֆր. 4, — Ա կարգ 1.25 ֆրանք, Ա. կարգ 1 ֆրանք, իսկ կանանց համար 50 սանթիմ, Բ. կարգ 5) սանթիմ, կալէրի 30 սանթիմ:

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ՆՈՐ ԵՐԴԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՋ ՀԱԹԿԱՎԱՆ. Այս երգարանը Բ. անգամ տպագրուելով աւելի ճոխացած ու բարեփոխուած է, եւ հակառակ գնոյն ածանոթեանը կը պարուհանակէ ազգային հին ու նոր խիստ շատ երգեր:

ԳԻՆ 1 ՖՐ. ՆԷՏԱ կամ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱԾԸ, Պուլկարիոյ ազատութենէն առաջ Պուլկար գիւղացիին Թուրքիէ կըրած տառապանքները ու անոնց նիստ ու կացը կը պատկերացնէ: Շատ հետաքրքրական:

ԳԻՆ 50 ՍԱՆԹ. ՀԱՅՐԵՆԻԻԻ ԶՈՇԵՐ. Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն, գրեց Դ. Նահապետեան:

Զեղչեալ ԳԻՆ 1 ՖՐ. Այս գիրքերը ստանալու համար պէտք է գիմել Խալալի խմբագրութեան, բոսթի ծախքը 10ական սանթիմ միտանդ զրկելով. իսկ գիրքերու արժէքին համար, եթէ ուրիշ զիւրուիլներ պակսին, կընդունուի նամակադրօյ 10 0/0 զեղչով:

Одговорникъ Н. Драгулевъ

Печ. на Хр. Н. Войниковъ—Варна